ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՄԱՄՆԱԿՑԵՑ ԳՅՈՒՄՐԻ ԲԱՅՐՈՆԻ ԱՆՎԱՆ ԴՊՐՈՑԻ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆԸ

Նոյեմբերի 3-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ԱՄՆ արևմտյան թեմի առաջնորդ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանի և Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի ուղեկցությամբ մեկնեց Գյումրի՝ մասնակցելու քաղաքի Բայրոնի անվան դպրոցի 50 և վերակառուցման 10-ամյակի հանդիսությանը:

Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը, Շիրակի մարզպետ Ֆելիքս Փիրումյանը, Գյումրիի քաղաքապետ Վարդան Ղուկասյանը:

50-ամյա դպրոցը, որ նախկինում Գ. Սունդուկյանի անունն է կրել, Գյումրիի շատ դպրոցների պես հիմնովին ավերվել էր 1988 թ. երկրաշարժից: 10 տարի առաջ, շնորհիվ լոնդոնաբնակ բարերար Ջորջ Քյուրքչյանի, քաղաքի անգլիական թեքումով միակ դպրոցը վերակառուցվեց և, ի պատիվ հայ ժողովրդի մեծ բարեկամ Բայրոնի, վերանվանվեց նրա անվամբ: Այսօր էլ պրն Ջորջ Քյուրքչյանն ու Հայաստանում Անգլիայի դեսպանատունը շարունակում են հոգ տանել դպրոցը հարմարավետ ու բարեշեն պահելու համար:

Ազգանվեր բարերարը՝ տիկնոջ հետ, ինչպես նաև Հայաստանում Մեծ Բրիտանիայի արտակարգ և լիազոր դեսպան Թիմոթի Ջոնսը ևս մասնակից էին դպրոցի հոբելյանական հանդիսությանը:

Վեհափառ Հայրապետի հետ մեկտեղ հյուրերը շրջեցին դպրոցում և ապա ներկա եղան դպրոցի շնորհալի աշակերտների կազմակերպած համերգին:

«Դպրոցի հոբելյանի առիթով Հայրապետիս հորդորն ու պատգամը պիտի լինի, որ մեր երեխաներին առաջնորդենք մեր հոգևոր արժեքների ճանապարհներով, առաջնորդենք նրանց դեպի Եկեղեցի, որովհետև առանց հոգևոր կյանքի առկայության մեր զավակներն անկարող պիտի լինեն արարել ու հայրենիք շենացնել»,- իր օրհնությունը տալով դպրոցի աշակերտներին ու ուսուցչական կազմին՝ ասաց Նորին Սրբությունը, հորդորելով նաև ամուր պահել բարեկամության ոգին, որ միայն բարիք է ծնում: Վեհափառ Հայրապետը ներկաներին ուրախությամբ ծանուցեց նաև, որ Գյումրիի ևս մեկ դպրոց կունենա հարմարավետ շենք: Մի քանի ամիս առաջ Գյումրի կատարած հովվապետական այցի ընթացքում, տեսնելով դեռ փոքրիկ տնակներում իրենց պարապմունքներն անցկացնող մանկապատանեկան դպրոցի շնորհաշատ սաներին՝ Վեհափառ Հայ-

ռապետը խոստացավ աջակցել նրանց: Այսօր մարզային իշխանությունները դպրոցին են տրամադրել մի շենք:

Մայր Աթոռ վերադառնալուց առաջ Նորին Սրբությունը այցելեց նաև Գյումրիի Անի թաղամասում կառուցվող Ս. Հակոբ եկեղեցի, որի հիմնարկեքը ևս կատարվել էր հովվապետական այցի ընթացքում, ձեռամբ Հայոց Հայրապետի:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՆԵՐԿԱ ԳՏՆՎԵՑ ԴԱՎԻԹԱՇԵՆԻ ԿԱՄՐՋԻ ԲԱՑՄԱՆԸ

Նոյեմբերի 17-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի, ՀՀ ԱԺ նախագահ Արմեն Խաչատրյանի և ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի հետ ներկա գտնվեց Երևանի Արաբկիր և Դավիթաշեն թաղամասերն իրար միացնող կամրջի բացմանը:

«Խորհրդանշական է Մեզ համար կամրջի կառուցումը այս դժվարին ժամանակներում, երբ առարկայական պատճառներով անջրպետված են մեր կյանքից բարօր ու անվրդով ապրելու զգացումները, երբ հացի ու օրավարձի խնդիրը դարձել է հիմնական ու ճնշող մտահոգություն»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ իր օրհնությունը տալով բոլոր նրանց, ովքեր մասնակից են եղել կամրջի կառուցման հայրենանվեր գործին:

Բացման արարողությունից հետո Նորին Սրբությունն ու հայոց պետական այրերը ոտքով անցան կամրջի ողջ երկարությունը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌԴ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԱՇՆԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ, ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ ՆԻԿՈԼԱՅ ՊԱՏՐՈՒՇԵՎԻՆ

Նոյեմբերի 29-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնության անվտանգության դաշնային ծառայության պետ, գեներալ-լեյտենանտ Նիկոլայ Պատրուշևին և նրա գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ